Արձանագրություն N19-փ/21
ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության
փորձագիտական հանձնաժողովի նիստի

22.07.2021թ. ք.Երևան

Նիստին մասնակցում էին հանձնաժողովի 8 անդամները:
Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ Յու. Ջավադյանը:

Օրակարգում՝ «ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի կողմից ներկայացված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի» քննարկում (Զեկուցող՝ Յու.Ջավադյան)

Զեկուցման մեջ նշվեց, որ Սևանա լճից ոռոգման նպատակով 2021 թվականին ջրի բացթողումները սկսել են մայիսի 25-ից: Հաշվի առնելով 2021 թ եղանակային պայմանների արդյունքում ստեղծված իրավիճակը, ինչպես նաև Հրազդան գետի շարունակական ջրասակավությունը, Ապարանի և Ազատի ջրամբարների թերլցվածությունը, տարածաշրջանում գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման պահանջարկի աճը, ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի կողմից ներկայացված է հայտ Սևանա լճից «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով սահմանված մինչև 170 մլն.մ³ ջրի բացթողման փոխարեն ընթացիկ տարում սահմանել մինչև 245 մլն.մ³:

2021 թվականի հուլիսի 15-ի դրությամբ, ջրամբարներում առկա ջրի դեֆիցիտը կազմել է 345.43 մ3, իսկ Սևան-Հրազդան ոռոգման համակարգը սնող Ապարանի, Ազատի և Մարմարիկի ջրամբարներում՝ 36.32 մլն մ³: 2021 թվականին համակարգի ոռոգման ջրի դեֆիցիտը կկազմի շուրջ 75 մլն մ³ Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանները լրացուցիչ ծանրաբեռնվածությամբ շահագործելու պարագայում:

Հանձնաժողովը փաստագրում է, որ 2021 թ մայիսի 25 դրությամբ Սևանա լճի մակարդակի վերաբերյալ ՀՀ ԱԻՆ Հայաստանի հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի պետական ծառայության տվյալներով պահպանվում է բացասական ցուցանիշը (անկում 4 սմ): Այս պահի դրությամբ հաստատագրված է անկում մինչև մինուս 17 սմ, ինչը կրում է շարունակական բնույթ: Ընթացիկ տարում Հանրապետության գետերում հոսքի նվազումը, ջերմաստիճանի միջին նշանակության բարձրացումը, ինտենսիվ գոլորշիացումը Սևանա լճից առաջարկվող 245 մլն.մ³ ջրառի դեպքում, նախնական հաշվարկներով լճի մակարդակը կիջնի ևս 10սմ, որը հակասում է «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի բ) կետի պահանջներին:

Միաժամանակ հանձնաժողովը նշում է, որ Էլեկտրաէներգիայի անբավարարության հետևանքով հնարավոր չի լինի իրականացնել Մխչյանի և Ռանչպարի պոմպակայանների գործարկումը ոռոգ ծավալով:

Որոշեցին՝

Հաշվի առնելով, ստեղծված ոռոգման ջրի դեֆիցիտի խնդիրը, ընդհանուր առմամբ հավանություն տալ «ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի կողմից ներկայացված «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծին»:

Հանձնաժողովը հարկ է համարում նշել, որ սույն որոշումը ուժի մեջ է միայն ընթացիկ տարվա համար:

Անդամներ
ՀՀ

Բ. Գաբրիելյան
Խ.Մելիքսեթյան
Ա.Թարվերդյան
Վ.Սահակյան
Գ.Ֆայվուշ
Օ. Գրիգորյան
Ռ.Հարությունյան

ԳԱԱ Սևանա լճի պահպանության
փորձագիտական հանձնաժողովի նախագահ Յու. Ջավադյան